

ՄԻԱՎ/ՁԻԱՀ քաղաքականություն

Ընդհանուր նկարագիր

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը լիարժեքորեն նվիրված է իր աշխատակիցների առողջության պահպանման գործին: Ընկերությունը ընդունում է, որ իր աշխատակիցներին կարող է սպառնալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ձեռք բերելու վտանգը և որոշ երկրներում ՄԻԱՎ/ՁԻԱՎ-ով հիվանդանալու դեպքերի բարձր ցուցանիշը կապված է վարակված մարդկանց բուժելու սոցիալական կամ բժշկական աջակցության համակարգերի բացակայությամբ:

Սույն քաղաքականությունը մշակվել է այս հարցերին երկու ճանապարհով լուծում տալու նպատակով՝

- ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի փոխանցումը և վարակը կանխարգելելու վերաբերյալ ուսուցողական ծրագրերի միջոցով կրճատել աշխատակիցների և նրանց ընտանիքների վարակվելու ռիսկը:
- Կառավարությունների, գնություն տրամադրող համապատասխան կազմակերպությունների և «Կոկա-Կոլա Ընկերության» հետ սերտ համագործության պայմաններում դա ապահովելու նպատակով, Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը կարող է իր մասնակցությունն ունենալ հիվանդ և վարակակիր աշխատակիցներին ու նրանց ընտանիքներին հակառետրովիրուսային դեղորայքով պահովելու գործում այն երկրներում, որտեղ ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդացության ցուցանիշը բարձր է, իսկ բուժումը հանրամատչելի չէ:

Այս քաղաքականությունը կազմվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով ՄԱԿ-ի համատեղ ծրագրի, Աշխատանքի միջազգային կազմակերպության

Աշխատանքային նորմերի և «Կոկա-Կոլա Ընկերության» Աֆրիկայի կորպորատիվ ուղեցույցների համաձայն:

Նպատակը

- Կազմակերպել աշխատակիցների ուսուցումը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված լինելու նպատակով, տրամադրել կոնֆիդենցիալ խորհրդատվություն՝ ապահովելով հիվանդ և վարակակիր աշխատակիցների հանդեպ հարգալից և արժանապատիվ վերաբերմունք:
- Աջակցություն տրամադրել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են թեստավորումը, ռենտգեն քննությունը, գաղտնիությունը և ոչ խտրական վերբաբերմունքն աշխատանքում:

Գաղտնիություն

Ցանկացած անհատի մոտ ՄԻԱՎ-ի առկայությունը կպահպանվի խիստ գաղտնի: ՄԻԱՎ-ին վերաբերող բժշկական գրառումները կհամարվեն գաղտնի տեղեկատվություն:

Այդ տեղեկատվությունը հասանելի է բացառապես Ընկերության բուժանձնակազմի համար և կարող է բացահայտվել միայն օրենքով պահանջված դեպքերում և աշխատակցի համաձայնությամբ:

Կամավոր Բացահայտում

ՄԻԱՎ վարակակիր կամ ՁԻԱՀ-ով հիվանդ աշխատակիցը պարտավոր չէ այդ մասին տեղեկացնել Ընկերությանը: Եթե աշխատակիցը տեղեկացնում է իր տնօրենին կամ Մարդկային ռեսուրսների ներկայացուցչին, ապա Տնօրենը պետք է

աջակցի և լսի աշխատակցին՝ նշելով հիմնական մտահոգությունները: Եթե Մարդկային ռեսուրսների ներկայացուցիչը իրավիճակի մասին տեղեկացված չէ, ապա Տնօրենը, միայն աշխատակցի համաձայնությամբ, կապվում է Մարդկային ռեսուրսների ներկայացուցչի հետ՝ աշխատակցին օգնություն ցուցաբերելու համար ցուցումներ և ռեսուրսներ ստանալու նպատակով: Յուրաքանչյուր դեպքը կարժանանա առանձնահատուկ վերաբերմունքի՝ աշխատակցի և բիզնեսի կարիքները հավասարակշռելու նպատակով:

Բժշկական թեստավորում

Ընկերությունը չի պահանջում, որպեսզի նոր աշխատատեղերի հավակնորդները կամ Կոկա-Կոլա Հելլենիկ-ի աշխատակիցները տրամադրեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող անձնական տեղեկատվություն՝ եթե դա չի պարտադրում համապատասխան օրենքը:

Աշխատակիցները, ցանկության դեպքում, կարող են ՄԻԱՎ/ՁԻԱՀ հետազոտություն անցնել կամավորության սկզբունքով՝ լրացնելով համաձայնության վերաբերյալ փաստաթղթերն և ստանալով նախաթեստային և հետթեստային խորհրդատվություն:

Խորհրդատվություն

Այնտեղ, ուր խորհրդատվությունը հասանելի չէ, Ընկերությունը բոլոր աշխատակիցներին տրամադրում է լրացուցիչ տեղեկատվություն և ուսուցողական ծրագրեր: Հնարավորության և անհրաժեշտության դեպքում այդ ծառայությունները և ծրագրերը կտարածվեն նաև աշխատակիցների ընտանիքների անդամների վրա:

Մենք աջակցություն կհայցենք նաև կայացած համայնքային աջակցության և խորհրդատվական խմբերի ծառայություններից՝ դրանց առկայության պարագայում: Այս ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը կարելի է կոնֆիդենցիալ կերպով ստանալ Մարդկային ռեսուրսների տնօրենից կամ ներկայացուցչից:

Աշխատանքային պայմաններ և աշխատանքի անվտանգություն

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը միջոցներ կձեռնարկի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող հիվանդություններով տառապող աշխատակիցներին համատասխան աշխատանքային պայմաններ տրամադրելու նպատակով: Սա կարող է ներառել աշխատանքային ժամերի վերադասավորում, հատուկ սարքավորումների տրամադրում, ընդմիջումների հնարավորություն, աշխատանքային ժամերին բժշկի այցելության թույլտվություն, առողջական վիճակով պայմանավորված ազատ օրերի տրամադրման ճկուն գրաֆիկ, աշխատանք կես դրույքով և աշխատանքում վերականգնվելու հնարավորություն:

Այն աշխատակիցները, ովքեր ՄԻԱՎ վարակակիր են, կարող են շարունակել աշխատել և վերապատրաստումներին, պաշտոնի բարձրացումներին, տեղափոխումներին, կարգապահությանը և այլ սոցիալական ապահովությանը վերաբերող հարցերի շուրջ նրանց հանդեպ վերաբերմունքը չի տարբերվի այլ աշխատակիցների հանդեպ վերաբերմունքից: Անաշխատունակությանը, վնասվածքներին/հաշմանդամությանը վերաբերող Ընկերության քաղաքականության և ընթացակարգերի դրույթները կկիրառվեն՝ ըստ խրոնիկ հիվանդությունների դեպքում սահմանված ընթացակարգերի:

Ընկերությունը չի կրճատի որևէ աշխատակցի միայն ՄԻԱՎ/ԶԻԱՀ վարակ ունենալու համար:

Երբ ԶԻԱՀ ունեցող որևէ աշխատակից շատ վատառողջ է և չի կարող շարունակել աշխատել և երբ այլընտրանքային աշխատանքային կարգավորումները՝ ներառյալ երկարացված անաշխատունակության թերթիկները, սպառվել են, աշխատանքային հարաբերությունները կարող են դադարեցվել՝ համաձայն հակա-խտրականության, աշխատանքային օրենքների և Ընկերության քաղաքականության և ընթացակարգերի:

Ռիսկի կրճատում և կառավարում

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը կապահովի առողջ և ապահով աշխատանքային միջավայր՝ ներառյալ նախազգուշական միջոցների կիրառումը, պաշտպանիչ սարքավորումների տրամադրումն ու սպասարկումը և առաջին օգնությունը:

Խտրականությանն առնչվող բողոքներ և կարգապահական ընթացակարգեր

Եթե աշխատակիցը համարում է, որ նա արժանանում է խտրական վերաբերմունքի ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր լինելու համար, նա պետք է իրավունք ունենա գործելու ըստ Ընկերության ներքին բողոքների ընթացակարգերի:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը կկիրառի անհրաժեշտ պատժիչ և կարգապահական գործողություններն այն աշխատակիցների նկատմամբ, որոնք մասնակցել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող աշխատակիցների նկատմամբ խտրականության դրսևորումներին:

Տեղեկացում

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը, համոզվելու համար, որ այն ունակ է արձագանքելու իր աշխատուժի առողջապահական պահանջներին և սատարելու համար մարդկային ռեսուրսների պլանավորմանն ուղղված ջանքերին, կարող է ձեռնարկել միջոցներ ներքին ՄԻԱՎ իրավիճակի իրատեսական գնահատականն ունենալու նպատակով: Այդ գնահատումը կիրականացվի կամավոր մասնակցության սկզբունքով, իսկ ստացված տեղեկատվությունը կմնա կոնֆիդենցիալ:

Ընկերությունը երաշխավորում է, որ այդ տեղեկատվությունը չի բացահայտի անհատի ինքնությունը:

Քաղաքականության վերանայում

Այս քաղաքականությունը կվերանայվի և կթարմեցվի ըստ անհրաժեշտության կամ երբ առնչվող զարգացումները հանգեցնեն քաղաքականության վերանայման անհրաժեշտությանը:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն